ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅ ԲՈՒՍԱՇԽԱՐՀԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՄՆԱԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

*Ա. Մ. ԲԱՐՍԵՂՅԱՆ*

Հայկական լեռնաշխարհում, սկսած վաղնջական ժամանակաշրջանից, կյանքի եւ կենցաղի անհրաժեշտությամբ առաջին հերթին ուշադրության է արժանացել բուսական ու կենդանական աշխարհը, որոնք ոչ միայն հանապազօրյա ապրուստի, գոյի հիմնական միջոցներն են եղել, այլեւ հայ մարդու ստեղծագործական եւ գիտական երեւակայմամբ դրանք առանձին-առանձին ծառայել են նաեւ իբրեւ բուսական-կենդանական դեղամիջոցներ: Դրանց հնագույն վկայությունները պահպանվել են ժայռաքանդակներում՝ իբրեւ զարդաքանդակված դրասանգներ, թերեւս նաեւ պաշտամունքային՝ առանձին գծերի արտացոլումներով: Վաղնջական ժամանակաշրջանից պաշտամունքային ծառեր են համարվել *սոսին, բարդին, կաղնին, ծիրանենին,* իսկ թփերից *վարդենին եւ նոնենին*, կենդանականից՝ *արծիվը, արագիլը կոունկը* քանդակված են ոչ միայն վիշապաքարերի վրա, այլեւ հանդիպում են հայ մանրանկարներում:

Պատմահայր Խորենացին սիրով է խոսում *«Սոսյաց»* եւ *«Ծննդոց»* անտառների մասին, որոնք հիմնվել են եւ դարձել պաշտամունք նախաքրիստոնեական եւ հետքրիստոնեական շրջանում, իսկ Խոսրովի անտառը հնից մինչ այժմ համարվել է արգելոց՝ «կարմիրգրքային»: Ուրարտագետները սեպագիր արձանագրություններից հայտնաբերել են բրգաձեւ այգիների գոյության փաստը, որն իր էությամբ գրեթե եզակի է, եւ դրանք առկա են եղել Տուշպա քաղաքում: Խորենացին վկայում է նաեւ հին աղբյուրներից վերցված տեղեկություններից, որ Վան քաղաքում եղել են Շամիրամի *«կախովի այգիները»*: Հավանաբար դրանք բրգաձեւ այգիներն են: Ժայռապատկերներն ավելի հին են՝ գալիս են վաղնջական շրջանից եւ առանձին պատկերներում հանդիպում են բեզոարյան այծերի, վայրի ոչխարների (մուֆլոնների), կխտարների, եղջերուների ուրվանկարներ, որոնց Հայաստանյան հինավուրց ծագման մասին վկայում են ոսկրաբանական տվյալները (Լալայան, 1940, Մեժլումյան, 1970):

Մեզ համար պատմագիտական առանձնահատուկ արժեք են ներկայացնում *ջրլող, երկարաարունք* թռչունները (ջրային)՝ *հավալուսն, սագեր, բադեր, չկնկուլներ, կոունկներ:*

Հայ քարագործ վարպետները իավերժանշաններին զուգահեռ դրվագել են նաեւ տարբեր բույսերի եւ կենդանիների սիլուետներ: Նույն զարդաքանդակները, մասնակի փոփոխակներով, հանդիպում են հին վանքերի պատերին, սյուներին, խորանների եւ հուշարձանային եւ այլ կոթողների վրա: Դրանք իրենց էությամբ հայկական ծաղիկների, ցորենի եւ գարու հասկերի, պաշտամունքային այլեւայլ պատկերների զարդահյուսքեր են, փոխադարձ կապը կենդանական եւ բուսական աշխարհն է՝ ֆլորան եւ ֆաունան (Նորադուսի, Վարդենիսի, Նոր Ջուղայի գերեզմանաքարեր):

Վաղնջական ժամանակներից Հայաստանում, իբրեւ պաշտամունք, մեծ շուքով նշվել է Վարդավառի ծիսակատարությունը, որը նույն իմաստով փոխակերպվեց նաեւ քրիստոնեական ժամանակաշրջանում եւ պահպանվում է մինչ օրս: Այդ օրը վարդի բուրավետ հյութի՝ միմյանց վրա շաղ տալու եւ դրանով իսկ հագենալու սովորությունը եղել է հիշարժան, որն ընդգծում է Հայաստանի՝ *վայրի վարդենիների, վարդաբույրի, վարդավառի բուժիչ,* տոնական, հանդիսավոր պայմաններում տվյալ թփի պաշտամունքի մասին, (Ա. Թախտաջյան, Ս. Թամամշյան, Դ. Սոսնովսկի, Պ. Յարոշենկո): Հայտնաբերել են վայրի վարդենիների Հայաստանյան հետեւյալ տեսակները՝ հրապարակվել են հայտնաբերողների անուններով: Զանգեզուրի (Rosa zangezura), Սյունիքի (R. sjuniki), Հրաչի (R. hrachiana), Սոսնովսկու (R. sosnovskyana), Ղազարյանի (R. kazarjanii) էնդեմիկ տեսակները:

Թերեւս, ինչ-որ ընդհանուր կապ ենք տեսնում նաեւ հայ հին մատենագրության առանձին վկայությունների եւ այսօր առկա վարդաթփերի առկայության միջեւ:

Վարդապաշտամունքի առարկայական վկայություն պետք է համարել նաեւ Հռիփսիմեի տաճարի, Թալինի եւ Պտղնիի վանքերի զարդաքանդակները: Հայ ժողովրդական բանահյուսության մեջ իր ուրույն տեղն ունի կույս աղջկա եւ նռան համեմատությունն ու գովերգումը՝ իբրեւ անմեղության, պտղաբերության, անմահության գաղափար (Զվարթնոց, Աղթամար, Թալին, Արթիկ): Թալինը, իբրեւ նախալեռնային գոտի, չէր կարող ունենալ խաղող եւ նուռ, սակայն Թալինի կաթողիկե վանքի զարդաքանդակները նռան բողբոջաշարով, նման են Զվարթնոցի զարդաքանդակներին:



digitised by

Հայտնի է, որ Հայոց աշխարհում մի առանձին պաշտամունք է համարվել կենաց ծառը, որի սյուժետային մոտիվները տարածված են ոչ միայն ճարտարապետական արվեստում, այլեւ առկա են հայ մանրանկարչության, նույնիսկ ծածկագրության մեջ եւ ներկայացնում են պտղատվության, սիրո, անմահության, գարնան՝ արբունքի հետ, բազմաբնույթ խորհրդանիշներով, որն իրականում փյունիկյան արմավենին է (ոմանց կարծիքով նաեւ բարդին), աճել է պատմական Հայաստանի տարբեր վայրերում՝ Քասախ գետի ափերում, Կիլիկիայում եւ այլուր:

***Կենաց ծառի*** տեսակավորումը առայժմ վիճահարույց է եւ դրանով իսկ տեղիք է տալիս տարբեր կարծիքների, որոնք առայսօր չեն հստակեցված, թե իսկապես հայոց պաշտամունքի կենաց ծառը ի՞նչն է:

Հայաստանը հայտնի է իբրեւ խաղողի հայրենիք: Հին քարեղեն ու գրավոր հուշարձանները վկայում են, որ այն մշակվել է Արարատյան դաշտավայրում, Վասպուրականում, Ուրմիա լճի մերձակայքում (մ. թ. ա. մոտ 800 տ. առաջ): Տարբեր խոսվածքներում մինչ օրս պահպանված են խաղողի տեսակների անուններ, որոնք այդպես եկել-հասել են մեր ժամանակները եւ վկայում են Հայաստանի՝ իբրեւ խաղողի հայրենիք լինելու մասին: Հիշատակության արժանի են եւ այն արտացոլումները, որ գտնում ենք Զվարթնոցի, Դվինի, Վաղարշապատի, Բագարանի, Նախիջեւանի, Թալինի, Մաստարայի, Արթիկի, Օձունի, Արցախի վանքերի ու եկեղեցիների քանդակներում:

Խաղողը եղել է պաշտամունք Հայաստանում, խաղողի վազը, իրոք, կենաց խորհրդացողուն է: Գինու, քաղցուի, չամիչի, դոշաբի եւ այլ պատրաստուկների հումքը խաղողն է, դրան գումարած նաեւ կենցաղային այլեւայլ նկատառումներով օգտագործվել է կտրված վազի հյութը: Իբրեւ զարդաքանդակ՝ հանդիպում են նաեւ տարբեր վայրի ծաղիկներ, որոնք թերեւս կարող են նմանվել հետեւյալ բույսերին՝ *գնարբուկ, մեխակ, զանգակածաղիկ, սինչ, կանթեղախոտ, մանուշակ, շուշան, հովտաշուշան, դաղձ, ծիծեռնախոտ, հովվափող* եւ այլն: Ծաղկաքանդակները պատկերված են *պսակաձեւ՝* ոճավորված զարդագծերով, փնջերով, տերեւների նուրբ հյուսվածաշարով (Զվարթնոց):

Հայ քարագործների զարդաքանդակներում բուսական ու կենդանական աշխարհը դիտարկված են որպես ընդհանուր միասնություն:

Հայկական ճարտարապետության հուշարձաններում, հոգեւոր ու նյութական մշակույթում անջնջելի եւ մնայուն դրոշմ է թողել նաեւ կենդանական աշխարհը: Մարդկային, թագավորական, ավետարանական, բազմաբնույթ դիմաքանդակների, խաղաղ աշխատանքի, որսի եւ այլ մոտիվների կողքին քանդակված են Հայաստանի ֆաունայի ամենատարբեր ներկայացուցիչների՝ եղնիկների, ցուլերի, քարայծերի, վարազների, ընձառյուծների, կարապների, արագիլների, արծիվների, բազեների եւ այլ կենդանիների ուշագրավ որմնաքանդակներ: Այդ ամենը վկայում են, որ կենդանական աշխարհը հայ ժողովրդի խոր անցյալում, վաղ հազարամյակներում եւս պաշտվել է: Հնում *ցուլը* համարվում էր սրբազան կենդանի: Ցուլի սպիտակ տեսակը Հայաստանի յոթ հեթանոսական մեհյանների ամենաառաջնակարգ զոհն էր համարվում: Տարածված են *առյուծների քանդակները,* որոնք հանդիպում են Գառնիում, Պտղնիում, Եղվարդում, Աղթամարում, Եղեգնաձորի շրջանի հուշարձաններում: *Եզան* քանդակներ Գեղարդում, Եղվարդում, Զվարթնոցում, Ցախացքարում, Սեւանում եւ այլուր: Թռչունների շատ տեսակներ, ինչպիսին են ծիծեռնակը, արագիլը, կռունկը, սարյակը, արծիվը, բազեն եւ այլն, հնում պաշտվել են: *Ծիծեռնակը* համարվել է գարնանաբեր թռչուն: Երկրագործության պաշտամունքի թռչուններ են համարվել արագիլը եւ կռունկը: Հուշարձաններում ռեալ դրվագներից բացի՝ կա օրինակ պայքարը արագիլի եւ օձի, որոնք բնության մեջ եւս թշնամիներ են, կան զանազան ֆանտաստիկ պատկերացումներ կենդանիների (առյուծ, ցուլ) թեւերով, օժտված թռչելու ունակությամբ, *թռչուններ՝* կենաց ծառերի ճյուղերին եւ այլն: Բուսական եւ կենդանական սյուժետներով զարդաքանդակներում անգնահատելի ավանդ է ներդրել հայ ճարտարապետ Մոմիկը 13-րդ դարի վերջին եւ 14-րդ դարի սկզբին:

Հայ մտավորականը, լինի փիլիսոփա, պատմաբան, աստղագետ, բժիշկ կամ հոգեւորական, անտարբեր չի մնացել իր շրջապատի բուսական աշխարհի նկատմամբ: Վաղնջական Հայաստանի բուսական ծածկույթի ջատագովներից էր Ագաթանգեղոսը (5-րդ դար): Նա հիշատակում է շուրջ 67 բույսի անուն՝ բնութագրելով յուրաքանչյուրի աճման, տարածման եւ օգտակար առանձնահատկությունները:

Հայաստանի բուսական ծածկույթի բազմազանությանը, հարստությանը եւ օգտագործմանը բազմիցս են անդրադարձել հռչակավոր պատմագիրներ Խորենացին եւ Փարպեցին: Փարպեցին (5-րդ դար) մասնավորապես նկարագրել է Արարատյան դաշտի բուսականությունը՝ համարելով այն *«ամենաբույս, ամենաբուղխ, ամենալի, ամենագիւղ, ի շահս ու ի դարմանս մարդկային պիտոյից կենաց»* մի գավառ, շրջապատված *«պարարտարոյ»* լեռներով ու ճոխ բուսականությամբ: Հետաքրքրական է նշել, որ Փարպեցին չի սահմանափակվել լոկ բուսականությամբ, այլ առաջադրել է դրանց օգտագործման մի շարք բնագավառներ՝ որպես *«սպեղանիք», «ի պետս օգտակարութեան դեղոց»,* նա տեղյակ է եղել յուղատու *«յուղաբուղխ»* բույսերի մասին եւ այլն:

Պատմահայր Խորենացին առանձին սիրով է նկարագրում սեզերի (որդանխոտ) օգտագործման մասին, նշում նաեւ, որ կարմիր ներկանյութ տվող որդանկարմիր միջատը *«ունի Արարատ լերինս եւ դաշտս, եւ զամենայն պարարտութիւն եւ որդն յարմատոյ սիզոյ առ ի զարդ կարմրութեան գունոյ»:*

Բուսական աշխարհի պաշարների իմացության ուրույն գաղափարներով է տոգորված միջնադարյան հայ բժիշկներ Գրիգոր Մագիստրոսի, Մխիթար Հերացու, Ամիրդովլաթ Ամասիացու, Ասար Սեբաստիացու եւ այլոց գործունեությունը: Վերջիններս լայն ժողովրդականություն եւ բժշկական փառք էին ձեռք



A.R.A.R.@

բերել՝ շնորհիվ տեղական բուսականության այս կամ այն ներկայացուցչի լայն օգտագործման: Այսպես, օրինակ, Մխիթար Հերացին եւ Ա. Ամասիացին քաջատեղյակ էին բուսականության այն բոլոր տեսակներին, որոնք բուժիչ կամ սննդային ծառայություններ կարող էին մատուցել մարդուն: Նա մշակել է դեղատու բույսերի հայերեն, արաբերեն եւ հունարեն անվանումները: Ավելին, ինչպես նշում են Լ. Ա. Հովհաննիսյանը եւ Ա. Գ. Տեր-Պողոսյանը, Հայաստանի տարբեր գավառներում հայ բժիշկները աճեցրել են դեղաբույսեր բուժման նպատակով հետագայում օգտագործելու ակնկալիքով:

Միջնադարյան Հայաստանում բուսատեսակները բուժական նպատակներով օգտագործելու ամենամեծ գիտակը, անշուշտ, Ամիրդովլաթն էր: Բավական է նշել, որ նա հիշատակել է 859 դեղաբույս՝ տալով բավականին հետաքրքիր էկոլոգիական ու կենսաբանական ծանոթագրումներ նրանց գալու վայրի, բուժական պիտանելիության եւ բազմաթիվ այլ առանձնահատկությունների մասին:

Հայ ժողովրդի կողմից բուսական ռեսուրսների օգտագործման հարուստ ավանդույթների եւ ուրույն բուսաբանական մտածողության արգասիքներ են Ս. Շահրիմանյանի *«Տնկաբանութիւն կամ փղորայ Հայաստանի»* եւ Ղ. Ալիշանի *«Հայբուսակ»* ֆունդամենտալ աշխատությունները: Շատ քիչ ազգեր կարող են համանման կամ համարժեք աշխատությունների գիտական խորությամբ եւ վաղեմությամբ համեմատվել հայերի հետ: Բավական է նշել, որ Ս. Շահրիմանյանը քաջատեղյակ էր շուրջ 1300 բույսերի, իսկ նրանց օգտագործման հիմնական բնագավառների հետ Ղ. Ալիշանը՝ 3100:

Բուսանունների ստուգաբանությունը հետաքրքիր բնագավառ է: Այդ ուղղությամբ մեծ են Նորայր Բուզանդացու, Հ. Աճառյանի եւ այլ հայագետների բերած ավանդները:

Հրապարակի վրա եղած բառարաններում կարելի է գտնել բազմաթիվ բուսանուններ, որոնց ստուգաբանությունը դեռեւս կարոտ է լայն ուսումնասիրության:

Հայտնի է, ու միջնադարյան մեր տաղերգուների, ավելի ուշ Սայաթ-Նովայի, Դավիթ Սալաձորցու եւ այլոց քերթվածներում ծաղկանունները մտել են գեղարվեստական խոսքի մեջ իբրեւ արտահայտչական միջոց: Դավիթ Սալաձորցին հիշվում է որպես ծաղկերգու:

Այդպես էլ «ծաղիկները» իրենց թույր ու բույրով մտել են Աղայանի, մանավանդ Թումանյանի մանկական բանաստեղծությունների տողերում ու քառյակներում:

Հայաստանի հարուստ եւ բազմազան ֆլորան ու բուսականությունը գայթակղել են ոչ միայն հայ գիտնականներին, այլեւ արեւմտաեվրոպական բազմաթիվ բուսաբանների, աշխարհագրագետների, երկրաբանների ու հողագետների՝ Տուրնեֆոր, Բուասյե, Բիբերշտեյն, Բուկսբաում, Բիզե, Վագներ, Գյուլդենշտադ, Հոհենակեր, Շովից, Կարլ-Կոխ, Աբիխ, Դոկուչաեւ: Վերջիններս տրանսպորտային եւ համաճարակային հիվանդությունների դժվարին պայմաններում այցելել են Հայաստան եւ կատարել ֆլորիստիկ կամ բուսաաշխարհագրական հետազոտություններ: Հայաստանի բուսականության առաջին օտարերկրացի հետազոտողը հանդիսացել է ֆրանսիացի բուսաբան Տուրնեֆորը, որը 1700-1702 թթ. գալով Հայաստան, շրջել է Արարատյան դաշտավայրի աղուտ անապատներով ու բարձրացել Արարատ լեռը: Հետաքրքրական է նշել, որ բուսական ծածկույթի ուղղահայաց գոտիականության օրինաչափությունը առաջին անգամ հայտնաբերել է Տուրնեֆորը Արարատը բարձրանալուց հետո: Արեւմտաեվրոպական բուսաբաններից առանձնահատուկ է գերմանացի Կարլ-Կոխի գիտարշավները Հայաստան: Նա երկու անգամ՝ 1836-1838 եւ 1843-1844 թթ. այցելում է Հայաստան ու կատարում մեծ քանակով վայրիաճ բույսերի հավաք ու կազմում բուսական ծածկույթի քարտեզ: Ինչպես Տուրնեֆորը, նույնպես եւ Կարլ-Կոխը, իսկ հետագայում նաեւ Վ. Դոկուչաեւը Հայաստանը համարում են *«դասական երկիր»* ֆլորայի, բուսական, հողային ծածկույթի ու կլիմայի բարձրունքային գոտիների առաջացման տեսակետից:

Հետագայում. Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, արեւմտաեվրոպական բուսաբաններին միացան նաեւ ռուս բուսաբաններ Գրինիվիցկին, Մեդվեդեւը, Վորոնովը, Ֆոմինը, Բուշը, Լիպսկին, Կուզնեցովը, Լեւանդովսկին, Խոցյատովսկին, Գրոսհեյմը, Գլասկոն, Սկիբիցկին եւ ուրիշներ: Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանից հավաքած բույսերի հավաքածուները (հերբարիումները), որպես կանոն, դուրս էին տարվում, կամ լավագույն դեպքում հանգրվանում արտասահմանյան որեւէ քաղաքում՝ Բեռլին, Փարիզ, Ժնեւ, Ցյուրիխ, Սանկտ-Պետերբուրգ: Վերջերս պարզ դարձավ, որ Կարլ-Կոխի Հայաստանից հավաքած հարուստ հերբարիումների մեծ մասը Բեռլինի ռմբակոծությունից առաջացած հրդեհի պատճառով ոչնչացել է (Edmondson, Lack, 1977, 1978): Ի դեպ կորել են նաեւ տարբեր առիթներով հայ գրականության տարբեր գործիչների հավաքած հերբարիումային նյութերը: Հանրահայտ է հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանը, որը 1829 թ. Դորպատի համալսարանի պրոֆեսոր Պարրոտի հետ բարձրանալով Արարատ լեռը՝ հերբարիում էր հավաքել: ***Ըստ գիտությունների ազգային ակադեմիայի լեզվի եւ գրականության ինստիտուտի ֆոնդերի, հայկական բույսերի հավաքածուներ է կազմել նաեւ Ռ. Պապկանյանը, ավելին նա կազմել է ավելի քան 600 բույսերի անունների բառարան:***

Հայաստանի ֆլորայի գիտական հավաքածուների հավաքման առաջին նախաձեռնողը եւ հիմնադիրը դարձավ բնության անխոնջ հետազոտող հայազգի Ա. Բ. Շելկովնիկովը: Վերջինս հանրապետության բնապատմական թանգարանում կազմակերպեց բուսապահոց (հերբարիում), որը հետագայում համալրվելով՝ դարձավ Բուսաբանության ինստիտուտի կարգաբանության բաժնի ամենահարուստ հավաքածուն՝ շուրջ 300 հազար նմուշ: Այստեղ է կենտրոնացված Հայաստանի ֆլորայի ավելի քան 3200 տեսակների խնամքով չորացված բուսատեսակների գենոֆոնդը: Դա անգնահատելի գանձ է, որը կարող է մրցել ԱՊՀ ցանկացած երկրի բուսապահոցների հետ, եւ շատ քիչ է զիջում աշխարհահռչակ էդինբուրգի,



digitised by A.R.A.R.@

Կյուի, Ժնեւի ու Սանկտ-Պետերբուրգի համանման հերբարիումներին:

Հայկական լեռնաշխարհի բուսատեսակների բազմամյա գույքագրումը, հերբարիումում կուտակված բուսանմուշների հարուստ կոլեկցիաները եւ երիտասարդ կադրերի նախապատրաստումը հնարավորություն ստեղծեց ձեռնամուխ լինել բարձրակարգ բույսերի ռեգիոնալ *«Հայաստանի ֆլորան»* տասհատորյա աշխատության մշակմանն ու հրատարակմանը: Վերջին 10-րդ պրակը արդեն հանձնված է տպագրման: Այն կազմված է աշխարհահռչակ բուսաբան, արտասահմանյան 20 ակադեմիաների իսկական անդամ, ակադեմիկոս Ա. Լ. Թախտաջյանի խմբագրությամբ: «Հայաստանի ֆլորան» աշխատությունը իրենից ներկայացնում է ժամանակակից բուսաբանական գիտության նորագույն նվաճումների (տաքսոնոմիական, կարիոլոգիական, պալինոլոգիական) օգտագործմամբ գրված պատկերազարդ համառոտագրեր Հայաստանում աճող բույսերի վերաբերյալ:

Հայաստանի ժողովրդական տնտեսության կայուն զարգացումը անքակտելիորեն խարսխված է բուսական պաշարների լայն ու նպատակասլաց օգտագործման վրա: Հայաստանի ֆլորան եւ բուսականությունը ոչ այլ ինչ են, եթե ոչ սննդի, անասնաբուծական, դեղագործական, ներկանյութերի, եթերայուղերի, վիտամինների, համեմունքների, բնափայտի եւ բազմաթիվ այլ օգտակար նյութերի ստացման շտեմարան: Նյութական միջոցների արտադրությամբ չեն սպառվում բուսական աշխարհի պոտենցիալ հարստությունները: Այն օժտված է սանիտարահիգիենիկ, ջրակարգավորիչ եւ հակաէռոզիոն հատկանիշներով: Դրանք մարդկային բարեկեցության, ստեղծագործական եւ հոգեկան ոգեւորման բաղադրիչներ են: Բուսականության պարգեւած գեղագիտական հաճույքի անկշռելի արժեքը չի զիջում նրա տված բազմաթիվ նյութական արժեքներին:

Ցանկացած քաղաքակիրթ երկիր, որի տարածքում կան համանման քանակի եւ որակի արժեքավոր բուսատեսակներ, բարոյական պատասխանատվություն է կրում դրանց պահպանման ու խնայողաբար օգտագործման համար: Սակայն, ցավոք, պետք է նշել, որ հանրապետության բնական ֆլորայի ու բուսականության պահպանության արդի վիճակը անհանգստացնում է մեզ՝ բուսաբաններիս: Բնաջնջման վիհին կանգնած բուսատեսակների քանակը Հայաստանում, որը կազմում է 387 տեսակ, ամենաբարձրն է ԱՊՀ-ում, շուրջ 12%: Չկա բնական ֆլորայի ռացիոնալ օգտագործման իրավա-օրենսդրական օրինակելի հայեցակարգ, ազգային ծրագիր եւ ռազմավարություն, չի մշակված բնօգտագործող սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները:

Ըստ 1993 թ. Ռիո դե Ժանեյրոյում կնքված միջազգային կոնվենցիայի, մարդկության առջեւ ծառացած ամենակարեւոր համամոլորակային հիմնախնդիրը բնական էկոհամակարգերի կենսաբանական բազմազանության պահպանությունն է: Հայաստանի մի շարք էկոհամակարգեր կիսաանապատներ, տափաստաններ, ճահիճներ ու անտառներ, մարդածին գործոնի ուժգնության հետեւանքով խարխլվում, քայքայվում ու կազմալուծվում են, կորցնելով իրենց բնականոն էկոլոգիական կապերը, հավասարակշռությունը, տեղիք տալով կենսաբանական բազմազանության տեսակների, ենթատեսակների, պոպուլյացիաների կրճատմանը ու բնաջնջմանը:

Միլիարդավոր տարիների ընթացքում ստեղծված արժեքավոր բուսատեսակները եւ դրանցով կազմված համակեցությունները չպետք է դառնան մարդու անխոհեմ գործունեության զոհեր հուշանմուշներ թողնելով միայն բուսապահոցներում ու բուսաբանական քարտեզներում:

Մենք ոչ մի բարոյական իրավունք չունենք գալիք սերունդներին զրկելու բնության գենոֆոնդի օգտագործման հավասարազոր ելակետային պայմաններից: Մարդու սրբազան պարտականությունն է պահպանել բնության ստեղծած բոլոր բուսատեսակները, անկախ նրանից, թե տվյալ բույսը օգտակար է այսօր, թե ոչ: Արդի գիտությունը կարող է ոչինչ չիմանալ տվյալ բուսատեսակների մասին, բայց վաղը, մեկ դար հետո, գիտության զարգացման հաջորդ փուլերում, հնարավոր է, որ բացահայտվեն այդ բույսերի նոր օգտակար հատկությունները:

### *ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ*


*Ալիշան Ղ., Հայբուսակ կամ հայկական բուսաբանություն, Վենետիկ, Ս. Ղազար, 1895:*

*Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, խմբագ. Ստ. Մալխասյանցի, 1940:*

*Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. I, Ա-Դ, Երեւան, 1971:*

*Առաքելյան Բ. Հ., Գառնի, Երեւան, 1954:*

*Թախտաջյան Ա. Լ., Հայաստանի բուսական աշխարհը, Երեւան, 1946:*

*Կարապետյան Գ. Մ., Բժիշկ Ասար Սեբաստացի, Բնագիտ. եւ տեխնիկայի պատմ. Հայաստանում, պր. VIII, 1987:*

*Կծոյան Ա., Ամիրդովլաթ Ամասիացի, պր. I, Երեւան, 1974:*

*Հայկական մանրանկարչություն, Հայաստան հր., Երեւան, 1969:*

*Ղանդիլյան Պ. Ա., Բարսեղյան Մ. Ա., «Հայաստանի բնությունը, գյուղատնտեսությունը եւ հարակից հարցեր Մովսես Խորենացու աչքերով. Հայաստանի բնություն», 1-3, 1994:*

*Մեժլումյան Ս. Կ., Սեւանի ավազանի կենդանական աշխարհը ըստ պեղածո նյութերի եւ ժայռապատկերների, «Հայաստանի բնություն», N1, 1989:*

*Նարինյան Ս. Գ., Պիտոն դ'Տուրնեֆորը Հայաստանում, «Հայաստանի բնություն», N3, 1978:*

*Շահրիմանյան Ս., Տնկաբանություն կամ ֆլորա Հայաստանի, Տփխիս, 1818:*
*Պատկանյան Ռ., Բերք Հայաստանի. ՀՍՍՀ ԳԱ լեզվի եւ գրականության ֆոնդ, 1879:*
*Պողոսյան Ս. Գ., Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչեւ 18-րդ դարը, Երեւան, 1960:*
*Վարդանյան Ս. Ա., Միջնադարյան հայ բժշկապետների հայացքների ու նրանց բուժման վերաբերյալ Բնագիտ. եւ տեխնիկայի պատմ. Հայաստանում, պր. VIII, 1987:*
*Красная книга Армянской ССР, т. I животные, т. II растения, Изд. Айастан, Ереван, 1987, 1990.*
*Межлумян С. К., Палеофауна эпох неолита, бронзы и железы на территории Армении, Ереван, 1972., Изд. Луйс, Ереван, 1993.*
*Труды Ботанич. инст. Арм. фил. АН СССР, т. 2, 1941*
*Тахтаджян А.Л. (редактор) Флора Армении, т. I-IX, Изд. АН Арм. ССР, Ереван, 1954-1995.*
*Edmondson J. R., Lack H. W. The Turkish and Caucasian collections of C. Koch, Noter Roy. Bot. Gard. Edinburg, 35, 3, 1977.*

**Барсегян А.М. - Описание растительного мира Армении и его использования по древним рукописным источникам -** На основании анализа данных древнеармянских рукописей, лечебников, археологических раскопок, наскальных изображений, архитектурных, этнографических наследий автором сделана попытка воссоздать историю использования флоры, фауны и растительного покрова Армении. За 3-4 тысячилетия до нашей эры, близ с. Гарни в жилище, относящегося к первой стадии эпохи бронзы, обнаружены косточки винограда, абрикоса, обугленные зерна пшеницы, свидетельствующие, что Армения - родина не только косточковых Armenica vulgaris, Vitis vinifera, но и диких пшениц - Triticum araraticum, T. urartu.

Араратская или армянская кошениль (вордан кармир) с незапамятных времен известна из долины среднего течения р. Аракс. Краска, получаемая из кошенили, очень высоко ценилась в прошлом. Окрашенные ею ткани, пряжа, ковры были желанной добычей завоевателей. Знаменитый пурпур "цирани" считался привилегией армянского царского дома.

Армянская кошениль играла большую роль в культурно-экономической жизни древней Армении. Сохранившиеся до сегодняшнего дня красочные армянские миниатюры, уникальные книги Матенадарана, настенные церковные рисунки во многом своему существованию обязаны "армянской" краске (так называли ее в древнем Востоке).

Помимо широкого использования "армянского кашемира" на Ближнем Востоке, эта краска экспортировалась и в страны Европы, где также пользовалась большим успехом.



digitised by A.R.A.R.@



# «ԷԿՖՐԱԶԻՍ» ԺԱՆՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՄԵՋ

*( պատմաբանասիրական նկարագրություններ հայ արվեստի կիսավեր եւ ավերված հուշարձանների )*

*Հ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ*

867 թվականին արյունալի հեղաշրջման հետեւանքով Բյուզանդական կայսրության գահին բարձրացավ հայազգի Վասիլ I, որով եւ հիմնադրվեց Մակեդոնական հարստությունը: Վասիլ I կատարեց տնտեսական ու քաղաքական մի շարք լուրջ բարեփոխումներ: Առավել շոշափելին մշակույթի նոր վերելքն էր[1]: Կատարվում են եկեղեցական, պալատական ու պաշտպանական ծավալուն շինություններ: Ժամանակակիցների վրա ցնցող տպավորություն է թողել հատկապես կայսեր հովանավորությամբ կառուցված «Նոր եկեղեցին», չքնաղ մի կառույց, որն, ըստ միապետի, պետք է գերազանցեր 532-537 թթ. կառուցված Սուրբ Սոֆիայի հռչակավոր տաճարը: Ցավոք, Վասիլ I հպարտությունը հանդիսացող այդ տաճարը կործանվեց խաչակրաց արշավանքների ժամանակ: Սակայն եկեղեցու մանրամասն նկարագրությունը ճարտարապետական համակարգը, խճանկարները, որմնանկարները, թողել է Ֆոտեոս պատրիարքը: Ահա այդ ժամանակ եւ հենց այդ հուշարձանի նկարագրությունից էլ առաջացավ արվեստի ու գրականության համադրության մի նոր ժանր, որը կոչվեց «էկֆրազիս»[2]:

Ճակատագրի հեգնանքով հայոց մշակույթի պատմությանը վիճակվեց ամենից ավելի ապավինելու օտար ափերում ստեղծված այդ հետաքրքրական ժանրին: Հայտնվելով հարեւան հզոր երկրների արյունալի բախումների թատերաբեմում, շարունակաբար ենթարկվելով ռազմատենչ ցեղախմբերի ավերող ասպատակություններին ու նվաճումներին, Հայաստանում արվեստի, մանավանդ կողոթային, հուշարձանների մեծ մասը կործանվում է: Այսօր պատմագրությունն ու արվեստագիտությունն այդ հուշարձանների մասին տեղեկություններ քաղելու համար ստիպված է դիմելու հիշյալ ժանրի հայկական նյութերին: Ասենք, որ մինչ Ֆոտեոս պատրիարքն էլ դեռեւս վաղ միջնադարում հայ պատմիչները առանձնահատուկ հետաքրքրություն դրսեւորել են արվեստի գործերի նկատմամբ. միայն թե դրանք եղել են համառոտ կամ էլ առասպելական նկարագրություններով համեմված: Այսպես, Մովսես Խորենացին պատմելով Ասորեստանի Շամիրամ թագուհու Հայաստանում կատարած շինությունների մասին[3], գրում է. «...եւ այսպես խիստ լարված աշխատանքի մեջ պահելով քիչ տարիներից հետո գլուխ է բերում հրաշալի հորինվածքը. ամուր պարիսպներով ու պղնձից շինած դռներով: Քաղաքի մեջ շինում է նաեւ բազմաթիվ ընտիր ապարանքներ, կրկնահարկ եւ եռահարկ, զարդարված տեսակ-տեսակ գույնզգույն քարերով...»[4]: Դա, փաստորեն, առաջին տեղեկությունն է հայոց աշխարհում խճանկարի (մոզաիկա) գործածության մասին, որը կարծես թե հատուկ ուշադրության չի արժանացել հայ արվեստագիտության կողմից: Մեկ ուրիշ դեպքում Խորենացին իր պատմության երկրորդ գրքում (մասն ԼԱ եւ ԼԲ) անդրադառնում է նաեւ Աբգար թագավորի հետ կապված Փրկչի կենդանագիր պատկերի պատմությանը[5]:

Խորենացու մոտ մի ավանդություն էլ կապված է Հոգեաց վանքում պահպանվող Տիրամոր պատկերի հետ[6]: Քրիստոնեական պաշտամունքի այդ նշանավոր ու նվիրական սրբավայրը գտնվում է Վան քաղաքից 40 կմ հարավ, Շատախ տանող ճանապարհին, գեղատեսիլ Կոդակ ծորի մեջ: Այստեղից է սկզբնավորվում Տիգրիս գետը: Ըստ ավանդության, 5-րդ դարում «Վերափոխման» տոնի կապակցությամբ վանքի հայրերը ծեռք են բերում Աստվածամոր մանկան հետ պատկերը եւ այն հանդիսավորությամբ տեղադրում Հոգեաց վանքի Ս. Աստվածածնի եկեղեցում[7]: Այդ կապակցությամբ Վասպուրականի իշխան Ապահակ Արծ-

---

*1 Ի դեպ, հայածագում այդ հարստության ժամանակ էր. երբ Բյուզանդիան լայն կապեր է հաստատում Ռուսիայի հետ: Կոստանդնուպոլսի պալատը մեծ լուսավորիչներ Կիրիլին եւ Մեթոդիին ուղարկում են վելիկոմորավյան փիրույթներ. որտեղ հղթայրները ստեղծում են պալոներեն այբուբենը:*

*2 Հունարեն բառակապակցություն է. որը նշանակում է «նկարագրել. տպավորությունն արտահայտել մանրամասն նկարագրելով:*

*3 Իհարկե. Խորենացին չգիտեր. որ այդ կառույցները Շամիրամի հետ կապ չունեն. որ այդ շրջանում գոյություն ուներ Ուրարտական պետությունը:*

*4 Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Երեւան. 1990. էջ 35:*

*5 Մովսես Խորենացի. նշվ. աշխ. էջ 96-97:*

*6 Ըստ ավանդության. Հոգեաց վանքի տեղում նախկինում կառուցված է եղել Անահիտ աստվածուհու հեթանոսական տաճարը: Բարթուղիմեոս առաքյալը քանդել էր այդ տաճարը նրա տեղում հիմնադրելով Ս. Աստվածածնի եկեղեցին:*

*7 Մեկ ուրիշ ավանդության համաձայն. Ս. Աստվածածնի վանքի մոտ է թաղված Մարիամ Մագդաղինացին. որը Տիրամոր այս հնագույն պատկերին ծառայելու համար եկել էր այստեղ եւ ճգնել մի այրի մեջ («Արեւելք». 1888 թ., թ. 1238):*